ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾԿՀ-25/4-ԳՀԾՁԲ

ք. _____ «____» _____ 2025թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԷԼԹԻ ՄՈՏՈՐՍ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման** պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

Digitally signed by
SAFARYAN ARTUR
2401750053
Date: 2025.05.15
16:19:05 AMT

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 (տասը)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1323900 (մեկ միլիոն երեք հարյուր քսաներեք հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[1]

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[1] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	«Էլ Թի Մոտորս» ՍՊԸ
Ք. Երևան, Սարյան 22	ք. Երևան, Մարգարյան 29/3
ՀՀ 900011183010	«Ամերիաբանկ» ԲԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1570065411040100
ՀՎՀՀ 02531594	ՀՎՀՀ 01301624
Գլխավոր քարտուղար Ա.Սաֆարյան	Տնօրեն՝ Լ. Խաչատրյան
---	Signature Not Verified Digitally signed by KHACHATRYAN MARINA 7411850683 ---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 2025թ. կնքված
ՀԾԿՀ-25/4-ԳՀԾՁԲ գնանշման հարցման ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը** 2025թ.
1	50111130/4	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների /համաձայն կից ներկայացված ցուցակի/	դրամ	440460	1	ք. Երևան	Ծառայության մատուցումներն իրականացվում են մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը՝ ըստ պատվիրատուի պահանջի
2	50111130/5			442980			
3	50111130/6			440460			

Հ/Հ	Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Наименования запасных частей и других вспомогательных материалов используемых при обслуживании	Տոյոտա Քեմրի 2014թ. (Toyota Camry)	Տոյոտա Քեմրի 2021թ. (Toyota Camry)	Հյունդայի Էլանտրա 2013թ. (Hyundai Elantra)
			Vin-JTNBFYFK203027659	Vin-XW7B14HK90S204912	Vin-KMHDH41CBDU782125
1	առջևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/	передние тормозные колодки /комплект/	17370	17370	14513
2	առջևի արգելակման կոճղակների փոխարինում	замена передних тормозных колодок	1395	1395	1373
3	հետևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/	задние тормозные колодки /комплект/	10575	10575	10463
4	հետևի արգելակման կոճղակների փոխարինում	замена задних тормозных колодок	1395	1395	1373
5	օդի զտիչ / 1 հատ /	воздушный фильтр /1шт/	2228	2228	2183
6	օդի զտիչի փոխարինում	замена воздушного фильтра	293	293	293
7	կայծաբաշխիչ կոճ / 1 հատ /	индукционная катушка /1шт/	10688	10688	10508
8	կայծաբաշխիչ կոճի փոխարինում	замена индукционной катушки	1553	1553	1508
9	վառելիքի զտիչ / 1 լիտր / կամ / 1 հատ /	топливный фильтр /1 литр/ или /1 шт/	10080	10080	9855
10	վառելիքի զտիչի փոխարինում	замена топливного фильтра	4208	4208	4118
11	անտիֆրիզ / 1 լիտր/	антифриз /1 литр/	1305	1305	1260
12	անտիֆրիզի փոխարինում	замена антифриза	810	810	810
13	վառոցքի մոմեր / 4 հատ /	свечи зажигания /4шт/	8213	8213	8145
14	վառոցքի մոմերի փոխարինում	замена свечей зажигания	2003	2003	1958
15	փոխանցման տուփի յուղ	трансмиссионное масло	3600	3600	3533
16	փոխանցման տուփի յուղի փոխարինում	замена трансмиссионного масла	4748	4748	4613
17	շարժիչի յուղ / 1 լիտր/	моторное масло /1 литр/	3150	3150	3083
18	շարժիչի յուղի փոխարինում	замена моторного масла	360	360	360
19	շարժիչի յուղի զտիչ / 1 հատ /	фильтр моторного масла /1шт/	1868	1868	1823
20	շարժիչի յուղի զտիչի փոխարինում	замена фильтр моторного масла	293	293	293
21	ինժեկտորի ֆարսոնկաների մաքրում / 4 հատ /	чистка форсунок инжектора /4шт/	10373	10373	10238
22	առջևի / հետևի անվաբացքի կարգաբերում	регулировка передних/задних шин	2790	2790	2745
23	տեխ.զննում	технический осмотр	923	923	923

24	համակարգչային դիագնոստիկա	компьютерная диагностика	2790	2790	2745
25	առջևի մեղմիչ / 1 հատ /	передний амортизатор /1шт/	30420	30420	30015
26	առջևի մեղմիչի փոխարինում	замена переднего амортизатора	3263	3263	3195
27	հետևի մեղմիչ / 1 հատ /	задний амортизатор /1шт/	24188	24188	23873
28	հետևի մեղմիչի փոխարինում	замена заднего амортизатора	3015	3015	2970
29	ղեկի գնդաձև հոդակապ / 1 հատ /	шаровая рулевой тяги	6233	6233	6143
30	ղեկի գնդաձև հոդակապի փոխարինում	замена шаровой рулевой тяги	2565	2565	2520
31	անվադողերի հավասարակշռում / 1 հատ /	балансировка шин / 1 шт. /	698	698	698
32	կայունարարի վռան /ութնյակ / / 1 հատ /	стойка стабилизатора /1шт/	6188	6188	6143
33	կայունարարի վռանի /ութնյակ/ փոխարինում	замена стойки стабилизатора	1643	1643	1598
34	դիմապակի մաքրող խոզանակ / 1 հատ/	щетка для очистки лобового стекла (дворники) /1шт/	2453	2453	2408
35	գնդաձև հոդակապ / 1 հատ /	шаровая /1шт/	7200	7200	7065
36	գնդաձև հոդակապի փոխարինում	замена шаровой	3015	3015	2970
37	առջևի կայունարարի ռետինե վռան / 1 հատ /	резина стабилизатора /1шт/	3668	3668	3645
38	առջևի կայունարարի ռետինե վռանի փոխարինում	замена резины стабилизатора	3015	3015	2970
39	ակումուլիատորային մարտկոց /ներառյալ փոխարինումը/ / 1 հատ /	аккумулятор /включая замену/ /1шт/	14670	14670	14648
40	ինժեկտորի ֆարսոնկա /1 հատ/	инжекторные форсунки /1шт./	16313	16313	15998
41	ինժեկտորի ֆարսոնկաի փոխարինում	замена инжекторной форсунки	4208	4208	4118
42	հետևի խլարարի բաք / 1 հատ /	бак заднего глушителя / 1 шт. /	39600	39600	38835
43	հետևի խլարարի բաքի փոխարինում	замена бака заднего глушителя	3915	3915	3870
44	շարժիչի բարձիկ / 1 հատ/	подушка двигателя / 1 шт /	20655	20655	20430
45	շարժիչի բարձիկի փոխարինում	замена подушки двигателя	5715	5715	5670
46	փոխանցման տուփի բարձիկ	подушка коробки передач	18405	18405	18180
47	փոխանցման տուփի բարձիկի փոխարինում	замена подушки коробки передач	1215	1215	1170
48	դիմահար լամպ / 1 հատ/	лампа ближнего света /1 шт./	2790	2790	2745
49	դիմահար լամպի փոխարինում	замена лампы ближнего света	495	495	473
50	հեռահար լամպ / 1 հատ/	лампа дальнего света /1 шт./	3263	3263	3218
51	հեռահար լամպի փոխարինում	замена лампы дальнего света	495	495	473
52	լամպ / 1 հատ/	лампа /1 шт./	585	585	585
53	լամպի փոխարինում	замена лампы	135	135	135
54	վառելիքի պոմպ / 1 հատ/	топливный насос /1 шт./	14940	14940	14760
55	վառելիքի պոմպի փոխարինում	замена топливного насоса	2408	2408	2318
56	արգելակման համակարգի հեղուկ	тормозная жидкость	1305	1305	1260
57	խլարարի ռետինե ամրակ / 1 հատ /	резиновый крепеж глушителя / 1 шт /	1733	1733	1710
58	թերմոստատ / 1 հատ /	термостат / 1 шт. /	5108	5108	5018
59	թերմոստատի փոխարինում	замена термостата	4118	4118	4073
60	շարժիչի ջրի պոմպ / 1 հատ /	водяной насос двигателя / 1 шт. /	13433	13433	13208
61	շարժիչի ջրի պոմպի փոխարինում	замена водяного насоса двигателя	4590	4590	4545
62	խլարարի կատալիզատոր / 1 հատ /	катализатор глушителя / 1 шт /	77738	77738	76388
63	խլարարի կատալիզատորի փոխարինում	замена катализатора глушителя	3623	3623	3488
64	պոմպ՝ դիմապակին ջրով մաքրելու համար / 1 հատ /	насос омывателя лобового стекла / 1 шт /	9765	9765	9585
65	դիմապակին ջրով մաքրող պոմպի փոխարինում	замена насоса омывателя лобового стекла	3465	3465	3420

66	հովացման համակարգի ընդարձակման բաք / 1 հատ /	расширительный бачок системы охлаждения / 1 шт /	9293	9293	9135
67	ընդարձակման բաքի փոխարինում	замена расширительного бачка системы охлаждения	1890	1890	1845
68	ընդարձակման բաքի կափարիչ / 1 հատ /	крышка расширительного бачка / 1 шт /	2678	2678	2633
69	առջևի մեղմիչի հենարան առանցքակալով / 1 հատ/	опорный подшипник передней стойки	8573	8573	8438
70	առջևի մեղմիչի հենարանի փոխարինում	замена опорного подшипника передней стойки	2565	2565	2520
71	առջևի դարձյակի առանցքակալ /1 հատ/	подшипник ступицы переднего колеса / 1 шт /	9923	9923	9788
72	առջևի դարձյակի առանցքակալի փոխարինում	замена подшипника ступицы переднего колеса	3465	3465	3420
73	հետևի դարձյակի առանցքակալ / 1 հատ/	подшипник ступицы заднего колеса / 1 шт /	13905	13905	13680
74	հետևի դարձյակի առանցքակալի փոխարինում	замена подшипника ступицы заднего колеса	3915	3915	3870
75	խլարարի վերանորոգում	ремонт глушителя	8123	8123	7988
76	անվադողերի վուլկանացում	вулканизация шин	3195	3195	3173
77	փոխանցման տուփի հանում և տեղադրում, վերանորոգում	демонтаж и установка коробки передач, ремонт	63900	63900	62100
78	կցորտման սկավառակ / 1 հատ /	диск сцепления / 1 шт /	11250	11250	11250
80	կցորդման սալ / 1հատ /	нажимной диск / 1 шт /	19125	19125	19125
81	առջևի ձգաձողի վռան / 1 հատ /	передний стабилизатор / 1 шт /	10575	10575	10260
82	կցորդման առանցկակալ / 1 հատ /	выжимной подшипник / 1 шт /	10800	10800	10800
83	ղեկի ուժեղարար / 1 հատ /	усилитель руля / 1 шт /	49320	49320	48780
84	ղեկի ուժեղարարի փոխարինում	замена усилителя руля	6908	6908	6818
85	ղեկային համակարգ / 1 հատ /	система рулевого управления / 1 шт /	73238	73238	71888
86	ղեկային համակարգի փոխարինում	замена системы рулевого управления	11723	11723	11453
87	օդի կարգավորման էլեկտրոնային ցուցիչ / 1 հատ /	электронный датчик регулирования воздуха /1 шт/	14423	14423	14153
88	դիմապակի մաքրող հեղուկ / 1 հատ /	жидкость для омывателя лобового стекла	1058	1058	1035
89	արգելակման օդային կարգավորիչ (վակում) /1 հատ/	воздушный регулятор тормозной системы (вакуум) /1 шт/	40545	40545	40343
90	արգելակման օդային կարգավորիչի (վակում) փոխարինում /1 հատ/	замена воздушного регулятора тормозной системы (вакуум) /1шт/	5715	5715	7245
91	սրահի ֆիլտր /1 հատ/	салонный фильтр /1 шт/	2228	2228	2183
92	սրահի ֆիլտրի փոխարինում	замена салонного фильтра	585	585	585
93	հովացման համակարգի ռադիատոր	радиатор системы охлаждения	35348	35348	35078
94	հովացման համակարգի ռադիատորի փոխարինում	замена радиатора системы охлаждения	14715	14715	14670
95	ղեկային համակարգի վռան	втулка рулевого управления	3938	3938	3870
96	ղեկային համակարգի վռանի փոխարինում	замена втулки рулевого управления	11498	11498	11363
97	ղեկի կոնտակտ/շլեյֆ/	рулевой контакт (шлейф)	20655	20655	20430
98	ղեկի կոնտակտի /շլեյֆ/փոխարինում	замена рулегого контакта (шлейфа)	4658	4658	4568
99	ղեկի ուժեղարարի յուղ	масло для усилителя руля	3150	3150	3083
100	ղեկի ուժեղարարի յուղի փոխարինում	замена масла для усилителя руля	2048	2048	2048
101	հետևի լապտերի բլոկ	блок задних ламп	10080	10080	9855
102	հետևի լապտերի բլոկի փոխարինում	замена блока задних ламп	4815	4815	4770
103	ապակիների էլեկտրական սեղմիչ	кнопка стеклоподьемника	4275	4275	4208
104	ապակիների էլեկտրական սեղմիչի փոխարինում	замена кнопки стеклоподьемника	3870	3870	3848
105	հովացման համակարգի (կոնդիցաների) լիցքավորում	заправка системы охлаждения (кондиционера)	9248	9248	9113
106	հովացման համակարգի (կոնդիցաների) վերանորոգում	ремонт системы охлаждения (кондиционера)	12465	12465	12420
107	ներքևի լծակի վռան	втурлка нижней подвески	3600	3600	3533
108	ներքևի լծակի վռանի փոխարինում	замена втулки нижне подвеска	5265	5265	5670

109	էլեկտրական մալուխների և սարքերի վերանորոգում	ремонт электрооборудования	17280	17280	17055
110	վառարանի ռադիատոր	радиатор печи	26348	26348	26078
111	վառարանի ռադիատորի փոխարինում	замена радиатора печи	17123	17123	16988
112	դիմացի լապտեր	передняя фара	17798	17798	17213
113	դիմացի լապտերի փոխարինում	замена передней фары	3015	3015	2970
114	քսենոնային լամպ	ксеноновая лампа	13748	13748	13613
115	քսենոնային լամպի փոխարինում	замена ксеноновой лампы	2340	2340	2295
116	քսենոնային լամպի բլոկ	блок ксеноновых ламп	10800	10800	10553
117	քսենոնային լամպի բլոկի փոխարինում	замена блока ксеноновых ламп	3465	3465	3420
118	արգելակման սկավառակ	тормозной диск	20655	20655	20430
119	արգելակման սկավառակի փոխարինում	замена тормозного диска	3465	3465	3420
122	շարժիչի փոկ	ремень двигатекя	2903	2903	2790
123	շարժիչի փոկի փոխարինում	замена ремня двигатекя	743	743	698
124	գեներատոր	генератор	48285	48285	47700
125	գեներատորի վերանորոգում	ремонт генратора	9315	9315	9135
126	գեներատորի փոխարինում	замена генератора	6998	6998	6863
127	գեներատորի առանցկակալ	подшипник генератора	3600	3600	3533
128	գեներատորի առանցկակալի փոխարինում	замена подшипников генератора	5873	5873	5738
129	հետևի լապտեր	задние лампы	24255	24255	23895
130	հետևի լապտերի փոխարինում	замена задних ламп	2340	2340	2295
131	բռնկման փական	генератор зажигания	24998	24998	24863
132	բռնկման փականի փոխարինում	замена генератора зажигания	4590	4590	4545
133	վառարանի ռադիատոր բացիչ	крышка радиатора	2678	2678	2633
134	վառարանի ռադիատորի բացիչի փոխարինում	замена крышки радиатора	540	495	473
135	ներքևի լծակ	нижняя подвеска	31905	29655	29430
136	ներքևի լծակի փոխարինում	замена нижняя подвеска	4950	4590	5220
137	արգելակման սկավառակի կոմպլեկտ	комплект тормозных дисков	12038	12038	11588
138	արգելակման սկավառակի կոմպլեկտի փոխարինում	замена комплекта тормозных дисков	5715	5715	5670
141	շարժիչի փոկի առանցկակալ	подшипник ремня двигателя	7425	7425	7313
142	շարժիչի փոկի առանցկակալի փոխարինում	замена подшипника ремня двигателя	3915	3915	3870
143	դիմացի թափարգելի հանում և տեղադրում	демонтаж и установка переднего бампера	7065	7065	6885
144	հետևի թափարգելի հանում և տեղադրում	демонтаж и установка заднего бампера	7065	7065	6885
145	դիմացի թափարգելի վերանորոգում	ремонт переднего бампера	9315	9315	9135
146	հետևի թափարգելի վերանորոգում	ремонт заднего бампера	9315	9315	9135
147	թափքի հղկում և ներկում դմ2	ремонт кузова и покраска 1 дм2	8663	8663	8348
148	դիմացի թափարգելի հղկում և ներկում դմ2	ремонт переднего бампера и покраска 1 дм2	8663	8663	8348
149	հետևի թափարգելի հղկում և ներկում դմ2	ремонт заднего бампера и покраска 1 дм2	8663	8663	8348
150	դիմացի լապտերների կարգաբերում	регулировка передних фар	2633	2633	2543
151	լեդ լույսեր	лед лампы	7943	7943	7718
152	լեդ լույսերի փոխարինում	замена лед ламп	2115	2115	2070
153	հակամառախուղային լապտեր	противотуманная фара	16155	16155	15930
154	հակամառախուղային լապերի փոխարինում	замена противотуманной фары	1890	1890	1845

155	ղեկային համակարգի յուղ	масло рулевой системы	3150	3150	3083
156	ծնկաձև լիսեռի էլեկտրոնային ցուցիչ	датчик коленвала	13703	13703	13478
157	ծնկաձև լիսեռի էլեկտրոնային ցուցիչի փոխարինում	замена датчика коленвала	3465	3465	3420
158	անվակունդի առանցկակալ	подшипник ступицы колеса	10845	10845	10710
159	անվակունդի առանցկակալի փոխարինում	замена подшипника ступицы колеса	4140	4140	4095
160	անվադողերի հեղույս և մանեկ	шпильки и гайки колес	1845	1845	1823
161	անվադողերի հեղույսի և մանեկի փոխարինում	замена шпилек и гайек колес	833	833	810
162	անվադողերի օդի ցուցիչ	датчик воздуха в шинах	9923	9923	9788
163	անվադողերի օդի ցուցիչի փոխարինում	замена датчика воздуха в шинах	3465	3465	3420
164	շարժիչի փականների սալնիկներ	сальники клапана двигателя	945	945	923
165	շարժիչի փականների սալնիկների տեղադրում	установка сальников клапана двигателя	1463	1463	1395
166	ատոքարշակ	эвакуатор	4703	4703	4703
167	հետևի լծակ	задний рычаг	13905	13905	13680
168	հետևի լծակի փոխարինում	замена заднего рычага	3915	3915	3870
169	հետևի լծակի վռան	втулка заднего рычага	3488	3488	3420
170	հետևի լծակի վռանի փոխարինում	замена втулки заднего рычага	2565	2565	2520
171	շարժիչի վերանորոգում	ремонт двигателя	108225	108225	105525
172	մխոցային օղակներ	поршневые кольца	23063	23063	22748
173	շարժիչի միջադիրների կոմպլեկտ	комплект прокладок двигателя	66015	66015	64935
174	շարժիչի շարժաթևային ներդիրներ	сальники привода двигателя	8213	8213	8145
175	շարժիչի արմատական ներդիրներ	коренные вкладыши двигателя	12780	12780	12555
176	հերմետիկ	герметик	1643	1643	1598
177	անվտանգության համակարգ	система безопасности	15188	15188	14873
178	անվտանգության համակարգի տեղադրում	установка системы безопасности	12780	12780	12555
179	ղեկային համակարգի պաշպանիչ վռան	защитная втулка рулевой системы	3600	3600	3533
180	ղեկային համակարգի պաշպանիչ վռանի փոխարինում	замена защитной втулки рулевой системы	4163	4163	4095
181	մեկնարկիչ	стартер	42885	42885	42165
182	մեկնարկիչի փոխարինում	замена стартера	6998	6998	6863
183	մեկնարկիչի վերանորոգում	ремонт стартера	9473	9473	9203
184	բաշխիչ լիսեռի ցուցիչ	датчик распредвала	13298	13298	13028
185	բաշխիչ լիսեռի ցուցիչի փոխարինում	замена датчика распредвала	1215	1215	1170
186	հետևի կայունարարի ռետինե վռան / 1 հատ /	резиновая втулка заднего стабилизатора	2205	2205	2183
187	հետևի կայունարարի ռետինե վռանի փոխարինում	замена резиновой втулки заднего стабилизатора	2565	2565	2520
188	ավտոմատ փոխանցման տուփի գլխավոր կառավարող բլոկ	главный блок управления акпп	58793	58793	57983
189	ավտոմատ փոխանցման տուփի գլխավոր կառավարողի բլոկ փոխարինում	замена главного блока управления акпп	20880	20880	20520
190	ավտոմատ փոխանցման տուփի գլխավոր կառավարողի բլոկի վերանորոգում	ремонт главного блока управления акпп	43695	43695	43155
191	ավտոմատ փոխանցման տուփի վերանորոգում /ներառյալ պահեստամասերը/	ремонт акпп /включая запчасти/	172688	172688	170438
192	գլխավոր կառավարող բլոկ	главный блок управления	55283	55283	54675
193	գլխավոր կառավարողի բլոկ փոխարինում	замена основного блока управления	27630	27630	27270
194	մեղմիչ պաշպանիչ ռետինե վռան	смягчающая защитная резина	2678	2678	2633
195	մեղմիչ պաշպանիչ ռետինե վռանի փոխարինում	замена смягчающая защитная резина	2340	2340	2295

196	փոխանցման տուփի ղեկավարման բլոկ	блок управления коробкой передач	87908	87908	87300
197	տեղադրման, ծրագրավորման և ադապտացիայի ծառայությունների կարգավորում	услуги по установке, программированию и адаптации	5963	5963	5895
198	դիմապակի	лобовое стекло	31163	31163	30713
199	դիմապակու տեղադրում	установка лобового стекла	9248	9248	9113
200	հետևի ապակի	заднее стекло	44663	44663	44213
201	հետևի ապակու տեղադրում	установка заднего стекла	8123	8123	7988
202	կողային հայելիներ	боковые зеркала	38970	38970	38565
203	կողային հայելիների տեղադրում	установка боковых зеркал	3713	3713	3645
204	կողային ապակիներ	боковые окна	17348	17348	17078
205	կողային ապակիներ տեղադրում	установка боковых окон	5873	5873	5738
206	փոխանցման տուփի զտիչ	фильтр каропки передачи	9248	9248	9113
207	փոխանցման տուփի զտիչ փոխարինում	замена фильтра каропки передачи	1418	1418	1373
208	փոխանցման տուփի միջադիրների կոմպլեկտ	комплект прокладок коробки передач	40478	40478	39848
209	արգելակման լույսերի կոնտակտ	контакт для стоп-сигналов	8730	8730	8505
210	արգելակման լույսերի կոնտակտի փոխարինում	замена контакта стоп-сигнала	4748	4748	4613
211	դռների փական	замок дверей	18248	18248	18113
212	դռների փականի փոխարինում	замена дверного замка	4590	4590	4545
213	դռների փականի վերանորոգում	ремонт дверных замков	4590	4590	4545
214	բախշիչ լիսեռի առացկակալ	подшипник распределительного вала	8438	8438	8123
215	ծրագրավորման և ադապտացիայի կարգավորում	настройка программирования и адаптации	5963	5963	5895
216	գռանատ դրսի	гранат снаружи	29250	29250	13500
217	գռանատի փոխարինում	замена граната	6750	6750	6750
218	գռանատ ներսի	гранат внутренний	27000	27000	14400
219	գռանատի փոխարինում	замена граната внутренного	6750	6750	6750
220	արգելակման սկավառակի հղկում	шлифовка тормозного диска	5400	5400	5400
221	շարժիչի շղթայի, մեղմիչ և ձգան	цепь двигателя, демпфер и спусковой крючок	29250	29250	25650
222	շարժիչի շղթայի մեղմիչի և ձգանի փոխարինում	замена демпфера приводной цепи и спускового крючка	36000	36000	36000
223	հիդրոմուֆտ	гидро сцепление	112500	112500	112500
224	հիդրոմուֆտի փոխարինում	հիդրոմուֆտի փոխարինում	27000	27000	27000
225	շարժիչի ծնկաձև լիսեռի դիմացի սալնիկ	передняя прокладка коленвала двигателя	9000	9000	5400
226	շարժիչի ծնկաձև լիսեռի դիմացի սալնիկի փոխարինում	замена передней прокладки коленвала двигателя	29250	29250	29250
227	անվակունդ	цапка	23802	23802	23850
228	անվակունդի փոխարինում	замена цапки	2250	2250	2250
Ընդհանուր			**2946668**	**2944013**	**2869133**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Ք. Երևան, Սարյան 22
ՀՀ 900011183010
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար Ա.Սաֆարյան

_____

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էլ Թի Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Մարգարյան 29/3
«Ամերիաբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1570065411040100
ՀՎՀՀ 01301624
Տնօրեն՝ Լ. Խաչատրյան

Signature Not Verified
Digitally signed by KHACHATRYAN MARINA 7411850683

Հավելված N 2
« » 2025թ. կնքված
ՀԾԿՀ-25/4-ԳՀԾՁԲ գնանշման հարցման ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**ընդամենը**
1	50111130/4	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների /համաձայն կից ներկայացված ցուցակի/	-	-	-	392000	392000	392000	420000	420000	420000	440460	440460	440460	**440460**
2	50111130/5		-	-	-	394200	394200	394200	423000	423000	423000	442980	442980	442980	**442980**
3	50111130/6		-	-	-	392000	392000	392000	420000	420000	420000	440460	440460	440460	**440460**
Ընդամենը			-	-	-	1178200	1178200	1178200	1263000	1263000	1263000	1323900	1323900	1323900	**1323900**

1. Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի հայտի հիման վրա՝ տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե Պատվիրատուի համաձայնությամբ ավելի երկար ժամկետ չի սահմանվում: Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն է ներկայացնում նախնական զննման և գնահատման ակտ:
2. Երաշխիք-պահեստամասերը պետք է լինեն նոր և բարձրորակ, գործարանային փաթեթավորմամբ: Նշված պահանջին չհամապատասխանելու դեպքում ծառայությունը չի ընդունվի: Ծառայությունների, պահեստամասերի և ռետինե դետալների համար երաշխիքային ժամկետ՝ առնվազն 1 (մեկ) տարի: Մարտկոցների շահագործման ժամկետը՝ առնվազն 2 (երկու) տարի:
3. Սպասարկման կենտրոնը պետք է գտնվի ք. Երևան վարչական տարածքում:

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
Ք. Երևան, Սարյան 22
ՀՀ 900011183010
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար Ա.Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էլ Թի Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Մարգարյան 29/3
«Ամերիաբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1570065411040100
ՀՎՀՀ 01301624
Տնօրեն՝ Լ. Խաչատրյան

Signature Not Verified
Digitally signed by
KHACHATRYAN MARINA

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
	ազգանուն, անուն
	Կ.Տ.

Signature Not Verified
Digitally signed by
KHACHATRYAN MARINA

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

Signature Not Verified

Digitally signed by KHACHATRYAN MARINA 7411850683
Date: 2025.05.14 17:55:09 AMT

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

Signature Not Verified

Digitally signed by KHACHATRYAN MARINA 7411850683
Date: 2025.05.14 17:56:08 AMT